

թեանց պատկերը: Մէջ տեղ հանուած են համաձայնագիր, պայմանագիր, սակարկութիւն, սակագրինի վերաբերեալ թղթեր: Բաները եղեր են՝ ի հարկէ՝ ըստ չափու պահանջուած գործի տեսակին, ընդարձակութեան, քանակին եւ ճոխութեան եւ արուեստագէտի ինքնագնահատութեան եւ պատուիրողի ունեւորութեան եւ ողբերգութեան: Պէտք է կարծել՝ որ հայերու մէջ ալ նոյնը եղեր է:

Ս. Պիժակ (ԺԳ. դարու ա. կէս) 1300 դարմ է ստացած Երեւանի գործ մը լրացնելու համար. իսկ ասոր կողքին՝ կայ հետեւեալ տխուր նմոյշը՝

«Աստուած լուսաւորէ զՅովհաննէս վարդապետի հոգին որ զմեզ կերակրէ ի զրել սորա»...:

* * *

ՄԵՇ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ ԿԻՂԻԿԻՈՅ ՄԷՉ

ԿՈՍՏԱՆԴՆՆԻՔ քահանայ, (Թերեւ Շարահլուանցը) «գոր աշակերտ նորա՝ Լեւոն Երէց, յամի 1306 կոչէ «անհաս եւ անհամեմատ գրիչ»:

ԳՐԻԳՈՐ, Մլիճի վանքի միաբաններէն, «գարգարիչ Պապեօսեան աւետարանին», «գերիվերոյ եւ անհաս ի ձեռս մեր»:

ՅԱԿՈԲ նկարիչ, Գայլավանքի միաբան: ՆԵՐՍԷՍ, Արքայակազմի միաբան, որ «նչ միայն գրիչ, այլ եւ հոչակաւոր պատկերագրող»:

ՍՏԵՓԱՆՈՍ Գոյն-Երիցանց, այն որ լի էր եւ պատարուն յարեհտ գրչութեան եւ ընդ բնաս հոչակեալ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ, Հեթում թագաւորի եղբայրը, Կոնստանդնուպոլիսի միաբաններէն, որ կրօնաւորի սքեմ առեր եւ զբաղեցնելու արուեստով զբաղեր է:

ՍԱՐԳԻՍ ՊԻՇԱԿ, զբնութեան եւ զրեքու պատկերագրութեան նրբին արուեստին մէջ մեր՝ այսպէս կոչուած «Կիլիկեան ժամանակաշրջանին» «գերաւարտեալ եւ, յոյժ հմուտ նկարագրութեան արուեստի», զարդարեր է բազմաթիւ մատաններ: Այս արուեստագէտը

ՍԱՐԳԻՍ ԵՐԷՅ անունով ալ ծանօթ է, քանի որ ի վերջոյ քահանայացի է*):

Այն հանգամանքը, որ Սարգիս Պիժակի անունը կը հանդիպինք միշտ իր օրերու (14րդ դարու առաջին կէսը) մեծերուն՝ թագաւորներ, իշխաններ եւ եպիսկոպոսապետներու անուններուն կից, ինքնին վկայական է անոր արտակարգ կարողութեան: Պիժակի արժանիքով մարդու մը կեանքը գեղեցիկ մէկ զբոյժ նիւթ կրնար ըլլալ, բայց մեզ ոչինչ հասած է իր մասին, բացի Վահրամ Բարունի դրած մէկ անէկոտոէն: Ինքը՝ վարպետը՝ իր յիշատակարաններու մէջ յայտնած է միայն «բազում ջանիւք» աշխատասիրած գործերուն կից կարճ կերպով՝ Սարգիս սուսանուն», «Սարգիս անարժան քահանայ»:

Կասկած չկայ որ հայ մայրեր շատ անգամ աշխարհ բերած են Սարգիս Պիժակներ: Ես ունիմ 400 անուններու մի ցուցակ արուեստագէտներու, որ զրեր եւ պատկերագրողներ են շատ մատաններ: Այս լուսահոգիք յայտնագործուեցան վերջին 40-50 տարիներու ընթացքին, երբ ցուցակագրուել սկսան հայ զբաղեցնելու հաւաքածոներ եւ ախոսս որ միայն անուններ են՝ կարճ ու կտրուկ, միայն անուններ...:

Պիժակի գործերուն դրամով վարձատրութեան մէկ պատահական յիշատակութիւնը կայ: Սերաստիոյ եպիսկոպոս Ստեփանոս այցելութեան է եկեր հայ թագաւոր Օշինի, որ անոր նուիրեր է մէկ աւետարան «Թերակատար գործ արագ եւ գեղեցկագիր գրչի եւ բազմբանց ծաղիօք գարդարեալ յոգնահանար նկարակերտ այլ ոչ յաւարտ հասուցեալ»:

Ընծայատաց Ստեփանոս եպիսկոպոսը՝ այս՝ դեռ չաւարտած գործին թերին լրացնելու համար «եղեալ ի խնդիր քաջ նկարագրի» գտեր է «գարբասէր քահանայ զՍարգիս՝ մահանունն Պիժակ» եւ, անոր վճարեր է որպէս

* ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆ, «գերահամբաւեալ ժամանակագիրն Կիլիկիոյ», անցողակի կը յիշէ որ՝ «Սարգիս Երէց՝ թեոքի Ստեփանոսի վահագու, աւարտել է «գրութիւն հրաշագան եւ նկարագրող գրքոցն Արարածոց, զսկզբնաւորեալն յաւուրս Բ. Լեւոնի յանկ եղեալ յաւուրս Գ. ին»: (Տես Հ. Ղ. Ալիշան, «Սիւսուան», էջ 517):